ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ «ԱՐՄԱՆ-ԵՐԵՄ» ՍՊԸ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ООО "АРМАН-ЕРЕМ"
RA MARZ GEGHARKUNIK LTD "ARMAN-EREM"

բ.Գավառ, Արծվաքար փող., հեռ. (093) 19-66-68
г.Гавар. ул. Арцвакар тел., (093) 19-66-68
c.Gavar. st.Artcvacar, tel. (093) 19-66-68

էլ. փոստ arman-erem@mail.ru

№ 03-15/112 «09» սեպտեմբերի 2015թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝
տիկին Ս. Դավթյանին

«ԻՋՆԱԽ» ՍՊԸ տնօրեն՝
պարոն Հ. Սիմոնյանին

«Արման-Երեմ» ՍՊԸ-ն (ՀՀ քաղաքաշինության նախարարության լիցենզիա № 11945) դիտարկելով « ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար համայնքի դպրոցի վերանորոգում» աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը, երաշխավորում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Օբյեկտի շինարարության նախահաշվային արժեքը կազմում է 5275,85 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Առդիր 1 թերթ:

Տնօրեն՝ Յու. Ավետիսյան

«Արման-Երեն» ՍՊԸ

Հաստատում եմ՝
«09» սեպտեմբերի 2015թ.
Տնօրեն՝
________ Յու. Ավետիսյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ըստ «ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար համայնքի դպրոցի վերանորոգում» աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի

Պատվիրատու <u>Տավուշի մարզպետարան</u> Նախագծող <u>«ԻՋՆԱԽ» ՍՊԸ</u>

Նախագծման հիմք է ծառայում Գանձաքարի գյուղապետարանի կողմից տրված թերությունների ակտը ինչպես նաև փաստացի ուսումնասիրության և չափագրության արդյունքները: Հաշվի են առնված նաև պատվիրատուի բոլոր առաջարկները և պահանջները:

Նախագծով նախատեսված է՝

<u>Քանդման աշխատանքներ.(1-ին մասնաշենք)</u>

- Մանրատախտակե և լինոլիումե հատակների քանդում շրջակների հետ միասին.
- Ց/ա հարթեցնող շերտի քանդում,

<u>Վերանորոգման աշխատանքներ.</u>

- Ց/ա հարթեցնող շերտի կառուցում 30մմ հաստությամբ,
- Երկրորդ հարկի միջանցքի չվերանորոգված հատվածի մամլոգրանիտե հատակի կառուցում 400x400մմ սալիկներով, լամինացված շրիշակներով.
- Երկրորդ հարկի թիվ 2,3,4,5 և երրորդ հարկի թիվ 1,2 դասասենյակների լամինատե հատակների կառուցում սպունգով և շրիշակներով:

Ներկայացված է նախահաշիվ *5275,85* հազ. դրամ գումարով:

Նախահաշվային փաստաթղթերը կազմված են շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա, որը հաստատված է թիվ 05 03.05.2008թ. հրամանով ՀՀ Քաղաքաշինության Նախարարության կողմից:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշվի հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը՝ 2049,28 և մեքենաների շահագործման ինդեքսը՝ 2900,39: Միջին ամսական հաշվարկային աշխատավարձն ընդունված է 221835 դրամ: Նյութերի արժեքն ընդունված է 2015թ. №06 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով: Լիմիտավորված ծախսերը հաշվարկված է ըստ տվյալ պահին գործող նորմատիվների:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

Շինարարական նյութերի արժեքին տրված է

ա - Տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից - 1.132
բ - Այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից - 1.05
գ - Պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից - 1.02

Նախագծանախահաշվային փաստաթղթերում նկատված թերությունները վերացվել են փորձաքննության ընթացքում աշխատանքային կարգով:

*Եզրակացություն:*

*« ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար համայնքի դպրոցի վերանորոգում »* աշխատանքների նախահաշվային փաստաթղթերը երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Նախահաշվային արժեքը կազմում է *5275,85* հազ. դրամ. ներառյալ ԱԱՀ:

Գլխավոր ճարտարագետ՝ ________ Ս. Աղալյան

Գլխավոր մասնագետ՝ Ա. Գրիգորյան